

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՎԵԼ ՎՆԱՍԱԲԵՐ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՂՄՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Վարուժանի Ավագյան Լիանա Սամվելի Ազատյան

Հոդվածը ստացվել է՝ 31.01.24, ուղարկվել է գրախոսման՝ 04.03.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության կարևոր ճյուղը, որը լուծում է երկրի պարենային անվտանգության խնդիրները: Սակայն կլիմայի փոփոխությունների արդյունքում բարձրանում է ոլորտի ռիսկայնության մակարդակը: Որպես կլիմայի փոփոխության հետևանք՝ ջերմաստիճանի բարձրացումը և տեղումների քանակի նվազումը բերում են բուսաբուծության համախառն արտադրանքի քանակի նվազման: ՀՀ-ում ներկայումս գործում են ռիսկերի մեղմման միջոցառումներ, սակայն դրանք բավարար չեն, որի հետևանքով գյուղատնտեսության ոլորտը կրում է մեծ կորուստներ, ինչն էլ բացասաբար է ազդում ոլորտի կայուն զարգացման վրա:

Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման համար կարևորվում է կարկտահարության դեմ պայքարը, այսինքն՝ անհրաժեշտ է ընդլայնել պաշտպանվող տարածքները, ներառելով հակակարկտային պաշտպանության նոր միջոցառումներ: Գյուղատնտեսական ռիսկերի շարքին են պատկանում նաև ցրտահարությունը և երաշտը:

Գյուղատնտեսական ռիսկերի մեղմման գործում կարևորվում է պետություն – մասնավոր հատված համագործակցությունը: Ռիսկայնության մեղմման առաջնահերթ լուծումներից է գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը:

Այս խնդրի կարևորությամբ է պայմանավորված **թեմայի ընտրության արդիականությունը:**

Հոդվածի հիմնական **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի ռիսկերը և գտնել դրանց մեղմման ուղիները:

Այդ իսկ պատճառով հետազոտության շրջանակներում դիտարկվել են հետևյալ **խնդիրները.**

- Ուսումնասիրվել է ՀՀ-ում գյուղատնտեսության ռիսկերը,
- Տրվել է դրանց լուծման և մեղմման ուղիները,
- Ստացված արդյունքների համադրմամբ մշակվել են առաջարկություններ:

Գրականության վերլուծություն: Գյուղատնտեսության ռիսկերի մեղմմանը անդրադարձել են ոլորտի մի շարք մասնագետներ, որոնց աշխատություններում ուսումնասիրվել են առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները:

Ըստ Ա. Ա. Պոպովայի՝ «շուկայական տնտեսության պայմաններում ռիսկը դառնում է անխուսափելի և բնական հատկանիշ, որը անհրաժեշտ է հաշվի

առնել արտադրությունը պլանավորելիս: Ցանկացած տնտեսական կառույց, ներառյալ ագրոարդյունաբերական արտադրությունը, պատկանում է տարբեր ռիսկերի ենթակա հավանական համակարգերի կատեգորիային»¹:

Է. Ն. Կրիլատիխը առանձնացրել է ռիսկերը ըստ տեսակների, «դրանք են արտադրական, ձեռնարկատիրական, վարկային, բանկային, գնային ապահովագրական, տնտեսական, եղանակային, տեղեկատվական»²:

Անդրադառնալով գյուղատնտեսության ռիսկերին՝ Գարկավը Վ. Վ. և Եգորովան Ն. Գ. նշում են, որ «մշտապես փոփոխվող սոցիալ-տնտեսական միջավայրում պարբերաբար փոփոխվում են գյուղատնտեսական արտադրության ռիսկերը և դրանց ազդեցության աստիճանը տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա: Գյուղմթերք արտադրողների կայուն գործունեության համար առանձնահատուկ նշանակություն ունեն ագրոռիսկերին հարմարվելու խնդիրները: Այդ կապակցությամբ գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեության մշտական վերլուծություն և գնահատում իրականացնելու, ինչպես նաև ռիսկերի կառավարման ոլորտում օպտիմալ լուծումներ փնտրելու համար առաջանում է հրատապ անհրաժեշտություն: Անհնար է ամբողջությամբ հեռացնել ռիսկը ձեռնարկատիրական գործունեությունից, սակայն պահուստների ստեղծումը և համապատասխան միջոցառումների ժամանակին իրականացումը թույլ կտա ձեռնարկատիրոջը նվազագույնի հասցնել ռիսկը»³:

Ըստ Ս. Ավետիսյանի, Հ. Ծպնեցյանի՝ «ՀՀ-ում ոչ մեծ տարածքի վրա առանձին մարզերում գյուղատնտեսական ռիսկերը բավականին տարբեր են: Հետևաբար՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում գյուղացիական տնտեսությունների կրած վնասները մեղմելու, ոլորտի ռիսկերը զսպելու և գյուղատնտեսությամբ զբաղվածների գործունեության շարունակականությունն ապահովելու նպատակով ըստ մարզերի համապատասխան միջոցառումների մշակումն ու մեխանիզմների ներդրումը»⁴:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրությունները իրականացվել են ոլորտի ուսումնասիրության, նկարագրական, վերլուծական, վիճակագրական տվյալների ուսումնասիրության մեթոդներով: Արդյունքում ներկայացվել են կիրառական առաջարկություններ:

¹ Потапова, А. А. Риски в аграрном производстве и пути их минимизации / А. А. Потапова // Управление рисками в АПК. – 2016. – № 4. – С. 115-125. <https://www.agrorisk.ru/pub/201604/11>

² Крылатых Э Н Экономические риски в агропромышленном комплексе//АПК : экономика и управление – 1999. - No7. –с. 3-14

³ Гарькавый В. В., Егорова Н. Г. Основные риски в малом и среднем предпринимательстве сельского хозяйства // Научно-методический электронный журнал «Концепт». – 2017. – Т. 23. – С. 38–42. – URL: <http://e-koncept.ru/2017/770429.htm>.

⁴ Ավետիսյան Ս., Ծպնեցյան Հ. և ուրիշներ – ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2017, Երևան «Տնտեսագետ» հրատարակչություն, էջ 8, https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S. Avetisyan_34.pdf

Վերլուծություն: Գյուղատնտեսությունը համարվելով տնտեսության կարևոր ճյուղերից մեկը, միաժամանակ համարվում է բարձր ռիսկային ոլորտ՝ կրելով բնակլիմայական բացասական գործոնների ազդեցությունը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը՝ լեռնային ռելիեֆը, սակավահողությունը և այլ գործոններ, ակնհայտ է, որ ռիսկայնության մակարդակը բավականին բարձր է: Հետևաբար կարևոր է ռիսկայնության արդյունքում առաջացած կորուստների վերացման կամ մեղման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում բնակլիմայական աղետներից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական տարածքներ¹:

Վերջին տարիներին երաշտից, կարկուտից, հեղեղումներից, զարնանային ցրտահարություններից և սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը գնահատվում է շուրջ 15-30 մլրդ դրամ: Ընդ որում, վնասի մեծ մասը բաժին է ընկնում կարկուտահարությանը²:

Գյուղատնտեսության ոլորտում կատարված ծախսերի արդյունքում եկամուտները կարող են ստացվել ներդրումներից ամիսներ անց: Սակայն հարկ է նշել, որ վերջնական արդյունքը պայմանավորված է ոչ միայն կազմակերպատնտեսական, այլև տեղի բնակլիմայական գործոններից:

Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքներ կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոլորտի առանձնահատկությունները, տեղի բնակլիմայական և տնտեսական պայմանները, հնարավոր ռիսկերը և դրանց կառավարման գործընթացները: Նշենք նաև, որ անբարենպաստ պայմանները ազդում են սերմերի, կերերի, կենդանիների վերարտադրության, պահեստավորվող սերմերի քանակի վրա:

Հատկապես բուսաբուծության ճյուղը համարվում է առավել ռիսկային և բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքները զգացվում են բերքատվության մակարդակի տատանումները դիտարկելիս:

Ստորև բերված աղյուսակում դիտարկել ենք գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի բերքատվության փոփոխությունները կապված կլիմայական պայմաններից՝ 2018-2022թթ. :

¹ Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ: Հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի N15 արձանագրային որոշմամբ: Էջ 5

² Նույն տեղում

**ՀՀ-ում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության փոփոխությունները
բնութագրող տվյալները 2018-2022թթ. համար¹**

գ/հա

	2018	2019	2020	2021	2022	2018-2022 թթ. միջինը	Միջինի և ամենացածրի շեղումը
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	26,1	16,9	20,5	12,9	21,8	19,6	6,7
որից ցորեն	28,2	19,6	22,5	16,8	24,5	22,3	5,5
կարտոֆիլ	187,3	199,2	212,8	179,3	182,1	192,1	12,8
Բանջարանոցային մշակաբույսեր	258,6	265,0	280,8	271,8	282,2	271,7	13,1
Բոստանային մշակաբույսեր	276,3	300,6	317,1	291,6	302,0	297,5	21,2
պտուղ և հատապտուղ	87,7	76,2	71,4	82,1	86,6	80,8	9,4
խաղող	120,1	146,1	189,3	157,9	149,3	152,5	32,44

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ հացահատիկի և հատիկաընդեղենային կուլտուրաների բերքատվությունը զգալի ցածր է եղել 2021 թվականին և տարիների միջին ցուցանիշի հետ շեղումը զգալի է: Աղյուսակ 2 –ում վերը նշված շեղումները դիտարկվել են ըստ ՀՀ մարզերի: Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ 2021թ-ին Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում հացահատիկ, հատիկընդեղենների և մասնավորապես ցորենի բերքի կտրուկ անկում է եղել, որը արդյունք է երաշտի: Ըստ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության տվյալների², 2021թ –ին վերոնշյալ մարզերում ամռան և աշնան ամիսներին օդի ջերմաստիճանը գնահատվել է տաք և չափազանց տաք, իսկ տեղումների քանակի գնահատման համար օգտագործվել է «չոր» բնութագրիչը, ինչը խոսում է տվյալ տարում սակավ տեղումների մասին:

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ Արագածոտնի մարզում 2018թ. խաղողի բերքատվության ցածր ցուցանիշ է գրանցվել, որը պատճառը եղել է կարկտահարությունը:

¹ ԱՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 3. Պարենի առկայություն 2023թ., էջ 39

² ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացնում է մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային տեղումների, հողերի, հատակային նստվածքների որակի մոնիթորինգ և գնահատում: <http://env.am/storage/files/iv-eramsyak-2021.pdf>, <http://env.am/shrjaka-mijavayr/shrjaka-mijavayri-monitoring>

**ՀՀ-ում հացահատիկի, հատիկաբնդեղենային մշակաբույսերի և կարտոֆիլի
բերքատվության փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի¹ (ց/հա)**

Մարզեր	Հացահատիկի, հատիկաբնդեղենային					Ցորեն					Կարտոֆիլ				
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022
Արագածոտն	23,7	14,6	23,3	6,8	19,6	26,6	15,7	23,8	7,4	20,7	181,4	214,9	268,2	203,7	217,1
Արարատ	37,5	36,4	37,3	34,7	37,3	37,1	38,5	39,0	37,5	38,5	262,4	272,5	285,1	281,8	277,0
Արմավիր	37,4	37,6	41,1	36,9	41,0	39,3	38,7	42,1	37,4	41,7	298,6	320,0	389,5	341,3	322,8
Գեղարքունիք	20,0	14,0	16,0	8,6	14,6	21,5	15,6	17,9	10,5	16,3	192,4	210,2	219,2	176,4	181,4
Լոռի	31,5	25,0	27,4	25,3	27,3	33,9	27,0	28,6	27,3	28,6	145,8	158,9	168,9	151,3	147,4
Կոտայք	23,8	13,6	18,7	11,3	18,7	26,0	15,2	18,8	12,1	20,7	175,3	186,2	190,7	189,7	179,3
Շիրակ	30,8	14,7	19,7	8,3	22,1	32,4	16,4	21,5	10,6	23,9	216,2	210,7	216,5	170,6	170,6
Սյունիք	20,9	17,3	15,6	16,1	23,8	21,6	17,8	17,5	19,6	25,8	144,3	144,6	149,8	122,0	146,3
Վայոց ձոր	23,1	13,2	11,1	11,0	13,5	24,2	16,9	11,9	10,0	15,0	115,8	131,3	138,4	116,6	124,9
Տավուշ	26,2	14,3	16,3	24,6	26,7	21,9	12,8	12,1	21,7	26,1	94,2	59,9	71,0	81,8	92,4
ՀՀ ընդամենը	274,9	200,7	226,5	183,6	249,6	284,5	214,6	233,2	194,1	257,3	1,826,4	1,909,2	2,097,3	1,835,2	1,859,2

Ներկայումս, կապված բնակլիմայական փոփոխությունների, տնտեսության ազատականացման, գյուղերից միգրացիայի, գիտատեխնիկական առաջընթացի, միջազգային քաղաքականության անկայունության և այլ պատճառների հետ, փոխվում է դիսկերի բնույթը:

Որպես կլիմայի փոփոխության հետևանք՝ ջերմաստիճանի բարձրացումը և տեղումների քանակի նվազումը բերում են բուսաբուծության համախառն արտադրանքի քանակի նվազման, որը երևում է վերը բերված տվյալներից, 2021թ. երաշտի հետևանքով ունեցել ենք հացահատիկի և հատիկաբնդեղենների բերքի զգալի կորուստ:

Կլիմայի փոփոխության արդյունք է նաև կենդանիների և բույսերի տվյալ տարածաշրջանի համար ոչ սովորական հիվանդությունների և վնասատուների ի հայտ գալը: Այսպես, օրինակ 2006թ-ին Հայաստանում խոզերի Աֆրիկյան ժանտախտ հիվանդության ի հայտ գալը, 2011թ-ին կրծողների աննախադեպ տարածումը, ինչպես նաև առնվազն 2014թ-ից լուրիկի հարավամերիկյան ցեցի տարածումը: Բազմաթիվ կարանտին հիվանդություններ մեր երկիր են ներթափանցում դրսից արտադրանքների ներկրման հետևանքով, որոնց տարածման համար, կլիմայի փոփոխության արդյունքում, մեզ մոտ ստեղծվել են բարենպաստ պայմաններ:

¹ ԱՎԿ, Պարենային ապահովություն և աղբատություն, 3. Պարենի առկայություն 2023թ., էջ 40-42

ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի բերքատվության փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի¹ (գ/հա)

Մարզեր	Բանջարանոցային մշակաբույսեր					Պտուղ և հատապտուղ					Խաղող				
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022
Արագածոտն	199,2	145,2	139,0	182,7	146,6	119,4	89,7	84,3	106,2	120,7	51,3	100,6	135,6	110,0	63,7
Արարատ	371,7	399,1	400,2	393,2	394,0	126,3	104,3	98,7	109,8	112,8	157,0	203,5	272,3	216,6	198,6
Արմավիր	285,8	304,7	336,6	339,6	342,7	117,3	117,4	103,4	124,5	130,7	136,7	153,4	188,2	168,8	168,4
Գեղարքունիք	239,6	217,9	201,1	155,4	201,2	87,1	93,8	90,2	90,5	48,3	-	-	-	-	-
Լոռի	135,2	114,9	122,9	95,3	156,4	30,5	25,8	29,3	13,6	8,6	21,8	15,6	13,1	13,8	26,5
Կոտայք	145,0	136,8	142,2	142,0	136,4	59,1	37,2	38,6	39,6	44,1	22,6	10,0	34,9	24,4	23,2
Շիրակ	216,8	169,8	174,0	132,7	153,6	82,0	50,2	64,7	36,0	39,0	-	-	-	-	-
Սյունիք	127,8	100,8	98,3	98,2	108,0	23,0	46,3	34,4	45,4	54,4	26,9	31,5	30,5	29,5	30,4
Վայոց ձոր	107,0	127,8	149,9	132,4	149,7	21,5	18,3	16,9	34,4	28,3	53,8	38,9	76,6	39,7	53,2
Տավուշ	88,3	74,6	64,6	79,6	76,2	34,6	36,6	42,4	41,2	54,7	74,8	86,1	95,8	84,8	81,5
ՀՀ ընդամենը	1,916,4	1,791,6	1,468,8	1,568,4	1,864,8	700,8	619,6	602,9	641,2	641,6	544,9	639,6	847	686,8	645,5

Այս ամենը ավելացնում են գյուղատնտեսական ռիսկերի մակարդակը և առաջանում է ռիսկերի կանխորոշման, մեղմման և կանխարգելման անհրաժեշտություն:

ՀՀ-ում ներկայումս գործում են ռիսկերի մեղմման միջոցառումներ, սակայն դրանք բավարար չեն, որի հետևանքով գյուղատնտեսության ոլորտը կրում է մեծ կորուստներ, ինչն էլ բացասաբար է ազդում ոլորտի կայուն զարգացման վրա:

2018-2020թթ. իրականացվել են ռիսկերի մեղմման մի շարք ծրագրեր: Այդ ծրագրերից են՝

- Բույսերի պաշտպանության միջոցառումներ², որը իր մեջ ներառում է պայքար մկնանման կրծողների, մորեխների, անտառի վնասակար օրգանիզմների դեմ:
- Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում³, որի նպատակն է կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովումը և վարակիչ հիվանդությունների կանխարգելումը:
- Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում⁴, որի ներդրումը՝ ի տարբերություն ներկայիս մակերեսային ոռոգման, որի ժամանակ ունենում ենք ջրի մեծ քանակի կորուստ, կրերի ջրի խնայողության:

¹ ԱՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 3. Պարենի առկայություն 2023թ., էջ 43,45,46

² «ՀՀ 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N818-Ն որոշում

³ Նույն տեղում

⁴ Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր: Հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N53 արձանագրային որոշմամբ

- Հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում¹, որի նպատակներից մեկն է հանրապետության այգիների տարեկան 2,4%-ը կարկտապաշտպան ցանցաշերտով պատելը:
- Գյուղապահովագրության ներդրում²:

Ներկայումս ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից գործարկվում են գյուղատնտեսության պետական աջակցության 14 ծրագրեր³ (2024 թվականի ապրիլ ամսվա դրությամբ): Մասնավորապես գյուղատնտեսության, բուսաբուծության ճյուղի ռիսկերի մեղմմանն են ուղղված՝

- գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման,
- Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության,
- տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական,
- Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության,
- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների,
- գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրերը:


Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տվյալների «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» շրջանակում ապահովագրվում են ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի, հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ), կարտոֆիլ, սալոր, կեռաս, բալ, ձմերուկ և սեխ մշակաբույսերը: Համաձայն նախարարության կողմից հրապարակված հաշվետվության. 2022 թվականի գյուղատնտեսական տարվա համար մշակվել է ապահովագրական նոր պրոդուկտ, որը ներառում է երաշտ ռիսկից հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան գարի և ցորեն, գարնանացան գարի, ցորեն և վարսակ) ապահովագրությունը: Ընդլայնվել է նաև ապահովագրվող մշակաբույսերի ցանկը՝ ներառելով կեռասը, բալը: Փոփոխվել է ապահովագրական գումարների

¹ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր: Հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N37 արձանագրային որոշմամբ

² «ՀՀ 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N818-Ն որոշում

³ Աղբյուրը՝ <https://mineconomy.am/page/1338>, վերջին մուտք 29/04/2024.

սահմանաչափերը՝ նախորդ տարվա առավելագույն, միջին և նվազագույն ապահովագրական սահմանաչափերի փոխարեն սահմանվել է 6 սահմանաչափ: Ծրագրի հիմնական արդյունքները ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» շրջանակում 2020-2022թթ.-ին զրանցած արդյունքները¹

2022 թվականին 2021 թվականի համեմատ ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի քանակը աճել է 19%-ով, իսկ ապահովագրված մակերեսը՝ 10.5%-ով: Ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 5091 ապահովագրության պայմանագիր՝ 6444 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար, համախառն ապահովագրավճարը կազմել է 866.3 մլն դրամ²:

Հայաստանի Հանրապետությունում բնական տարբեր աղետներից՝ զարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածքներ, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության մեջ զբաղվող տնտեսավարողների հետագա արտադրական գործունեության ու սոցիալական վիճակի վրա: Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15%, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100% ³:

¹ Գծապատկերը վերցվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակված «Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2022, տարեկան հաշվետվություն», Էլեկտրոնային հղումը՝ <https://mineconomy.am/media/22735/2022.pdf> , էջ 17, վերջին մուտք 29/04/2024.

² «Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2022, տարեկան հաշվետվություն», Էլեկտրոնային հղումը՝ <https://mineconomy.am/media/22735/2022.pdf> , էջ 17-18, վերջին մուտք 29/04/2024.

³ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 13-ի նիստի N15 արձանագրային որոշման, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=89460>

Ակնհայտ է, որ գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման համար կարևորվում է կարկտահարության դեմ պայքարը, այսինքն՝ անհրաժեշտ է ընդլայնել պաշտպանվող տարածքները, ներառելով հակակարկտային պաշտպանության նոր միջոցառումներ:

Գյուղատնտեսական ռիսկերի շարքին է պատկանում նաև ցրտահարությունը, որի դեմ կիրառվում են այնպիսի ավանդական միջոցառումներ, ինչպիսիք են առատ ոռոգումը և ծխահարումը: Եվրոպայում՝ ցրտահարության դեմ պայքարում, կիրառվում են նորագույն մեթոդներ, որոնցից են արհեստական անձրևացումը, արհեստական մառախուղի ձևավորումը, ջերմային մեթոդը՝ ջերմություն արձակող ռեագենտների կիրառմամբ և այլն: Սակայն այս մեթոդները արդյունավետ, բայց միաժամանակ ծախսատար են:

Գյուղատնտեսական ռիսկերի մեղմման գործում կարևորվում է պետություն – մասնավոր հատված համագործակցությունը: Ռիսկայնության մեղմման առաջնահերթ լուծումներից է գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը:

Մ. Մանուչարյանը անդրադառնալով կապիտալի ներդրման տեսանկյունից գյուղատնտեսության ոլորտի ռիսկայնությանը, նշում է, որ գյուղատնտեսական ապահովագրության համակարգի զարգացումը մնում է ագրոարդյունաբերական արտադրության ապահովման կարևոր գործոն¹:

Ապահովագրության կարիք ունեն ոչ միայն մշակաբույսերը և կենդանիները, այլ նաև գյուղ տեխնիկան և շինությունները:

Բացի կլիմայական ռիսկերից, կան նաև ռիսկեր կապված մթերման գնային տատանումների և շուկայի հասանելիության բացակայության հետ: Գյուղմթերքների մթերման և ընդհանրապես տեղափոխման վրա բացասաբար են ազդում ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վատ որակը, որը ստեղծում է մատչելիության դժվարություններ, ինչպես նաև բերում է տեխնիկայի վնասման: Գյուղերում նկատվում է նաև որակյալ մասնագիտացված աշխատուժի պակաս:

Գյուղացիական տնտեսությունների, հատկապես հեռավոր մարզերի, համար կա նաև տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության խնդիր: Այստեղ բացակայում են նաև արտադրանքի իրացումով զբաղվող կառույցները: Ունենք նաև հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման և մասնատվածության խնդիր:

Պահաձոյացման փոքր արտադրամասերի հիմնադրման ռիսկայնության պատճառներից մեկը՝ ոլորտի ապահովագրական համակարգի բացակայությունն է: Ինտենսիվ գյուղատնտեսության արտադրության բարձր ռիսկայնությունը

¹ Մանուչարյան Մ., Պետական աջակցության անհրաժեշտությունը գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործում: Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտաժողովի հոդվածների ժողովածու-2016, էջ 280-284, ISSN 1829-4324

կապված է ապահովագրական համակարգի բացակայության, արտահանման խնդիրների, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերություններին վերապահված գործառույթի վտանգում, կապված վարձավճարների խնդիրների հետ: Գյուղատնտեսության ոլորտում ռիսկայնության պատճառ է հանդիսանում նաև վարկավորման ծավալների, տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանները, ինչպես նաև պետական ոչ բարենպաստ քաղաքականությունը:

Այն որ գյուղատնտեսությունը պարենային անվտանգության հարցում առաջնային ոլորտ է՝ պարզ ճշմարտություն է, և հետևաբան ոլորտի ռիսկերի մեղմմանն ուղղված աշխատանքները շատ կարևոր են երկրի տնտեսության համար: Ուսումնասիրելով վերոնշյալ խնդիրները, նրանց լուծման համար անհրաժեշտ է իրականացնել պետական բարենպաստ քաղաքականություն և ռազմավարություն, վարկավորման ծավալների, ժամկետների և տոկոսադրույքների բարենպաստ պայմաններ, ապահովագրական տիրույթի ընդլայնում, մթերման և արտահանման հետ կապված խնդիրների լուծում, տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության ապահովում: Անհրաժեշտ է պետական աջակցություն՝ ցրտահարության դեմ պայքարում արտերկրյա փորձի ներդրման գործում: Անհրաժեշտ է նաև ապահովել կաթիլային ոռոգմամբ և հակակարկտային ցանցերով պաշտպանված տարածքների ընդլայնումը:

Գիտական նորույթը: Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ բուսաբուծության ճյուղի հիմնական ռիսկերը, և ներկայացվել են մոտեցումներ՝ ուղղված դրանց մեղմմանը: Այդ մոտեցումները հետևյալներն են.

- պետական բարենպաստ ագրարային քաղաքականության մշակում և կիրառում,
- գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործում՝ մասնավորապես ապահովագրության այլընտրանքային տեսակների կիրառում, ինչպիսիք են օրինակ **եղանակային ինդեքսի ապահովագրությունը**,
- գյուղատնտեսության խորհրդատվական համակարգի հիմնախնդրի լուծման նպատակով՝ պետական լծակների ու քաղաքականության կիրառում,
- պետական աջակցություն կատարելագործում՝ ցրտահարության դեմ պայքարում արտերկրյա փորձի ներդրման գործում: Մասնավորապես Արմավիրի, Արարատի, Արագածոտնի մարզերում կորիզավորների վաղ գարնանային ցրտահարություններից պաշտպանության միջոցառումների մշակում,
- կաթիլային ոռոգմամբ և հակակարկտային ցանցերով հողատարածքների ընդլայնման նպատակով գործող պետական աջակցության ծրագրերի շարունակականության ապահովում:

Եզրակացություն: Գյուղատնտեսությունը համարվելով ՀՀ տնտեսության կարևոր ճյուղ, ենթակա է բարձր ռիսկերի: Հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ ներկայումս գործում են ռիսկերի մեղմման ուղղված միջոցառումներ, սակայն դրանք բավարար չեն,

10. Մանուչարյան Մ., Պետական աջակցության անհրաժեշտությունը գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտաժողովի հոդվածների ժողովածու-2016, էջ 280-284, ISSN 1829-4324
11. Гарькавый В. В., Егорова Н. Г. Основные риски в малом и среднем предпринимательстве сельского хозяйства // Научно-методический электронный журнал «Концепт». – 2017. – Т. 23. – С. 38–42. – URL: <http://e-koncept.ru/2017/770429.htm>.
12. Крылатых Э Н Экономические риски в агропромышленном комплексе//АПК : экономика и управление – 1999. - No7. –с. 3-14
13. Потапова, А. А. Риски в аграрном производстве и пути их минимизации / А. А. Потапова // Управление рисками в АПК. – 2016. – № 4. – С. 115-125. <https://www.agrorisk.ru/pub/201604/11>
14. https://asue.am/upload/files/amberd-economic-policy/S._Avetisyan_34.pdf
15. <https://mineconomy.am/page/1338>

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՎԵԼ ՎՆԱՍԱԲԵՐ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՂՄՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Վարուժանի Ավագյան Լիանա Սամվելի Ազատյան

Համառոտագիր: Գյուղատնտեսությունը լինելով Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, ենթակա է ռիսկերի, որոնք կապված են թե պատահական, նախօրոք անկանխատեսելի կլիմայական, թե այլ իրադարձությունների հետ: Կլիմայի փոփոխությունը հանգեցնում է բուսաբուծության համախառն արտադրանքի քանակի նվազման: Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման համար կարևորվում է կարկտահարության դեմ պայքարը, այսինքն անհրաժեշտ է ընդլայնել պաշտպանվող տարածքները, ներառելով հակակարկտային պաշտպանության նոր միջոցառումներ: Գյուղատնտեսական ռիսկերի շարքին են պատկանում նաև ցրտահարությունը և երաշտը:

Գյուղատնտեսական ռիսկերի մեղմման գործում կարևորվում է պետություն – մասնավոր հատված համագործակցությունը: Ռիսկայնության մեղմման առաջնահերթ լուծումներից է գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը:

ՀՀ-ում ներկայումս գործում են ռիսկերի մեղմման միջոցառումներ, սակայն դրանք բավարար չեն, որի հետևանքով գյուղատնտեսության ոլորտը կրում է մեծ կորուստներ, ինչն էլ բացասաբար է ազդում ոլորտի կայուն զարգացման վրա:

Այս խնդիրների կարևորությամբ է պայմանավորված թեմայի ընտրության արդիականությունը:

Հոդվածի հիմնական **նպատակն** է բացահայտել գյուղատնտեսական ռիսկերի հիմնախնդիրները և առաջարկել դրանց դիմակայելու ուղիները:

Ուսումնասիրությունները իրականացվել են ոլորտի ուսումնասիրության, նկարագրական, վերլուծական, վիճակագրական տվյալների ուսումնասիրության մեթոդներով: Արդյունքում ներկայացվել են կիրառական առաջարկություններ, ինչպիսիք են պետություն – մասնավոր հատված համագործակցությունը, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը:

Հոդվածում անդրադարձ ենք կատարել գյուղատնտեսության ռիսկերի տեսակներին, դրանց հետևանքներին և արվել են դրանց մեղմմանն ուղղված առաջարկություններ:

Գիտական նորույթը: Հոդվածում ուսումնասիրվել, մշակվել և հիմնավորվել են մոտեցումներ, որոնց կիրառումը կնպաստի դիմակայել գյուղատնտեսական ռիսկերին:

Դրանք հետևյալներն են.

- իրականացնել պետական բարենպաստ քաղաքականություն և ռազմավարություն,
- վարկավորման ծավալների, ժամկետների և տոկոսադրույքների բարենպաստ պայմաններ,
- ապահովագրական տիրույթի ընդլայնում,
- մթերման և արտահանման հետ կապված խնդիրների լուծում,
- տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության ապահովում,
- պետական աջակցություն՝ ցրտահարության դեմ պայքարում արտերկրյա փորձի ներդրման գործում,
- ընդլայնել կաթիլային ոռոգմամբ և հակակարկտային ցանցերով պաշտպանված տարածքների ընդլայնումը:

Բանալի բառեր: Գյուղատնտեսական ռիսկեր, կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, գյուղատնտեսական ապահովագրություն, բերքատվություն, ռիսկերի մեղմում:

НАИБОЛЕЕ РАЗРУШИТЕЛЬНЫЕ РИСКИ РАСТЕНИЕВОДСТВА И ПУТИ ИХ СМЯГЧЕНИЯ В РА

Գայанե Варужановна Авагян
Лиана Самвеловна Азатян

Аннотация: Сельское хозяйство, являясь одной из важнейших отраслей экономики Республики Армения, подвержено рискам, связанным со случайными,

непредсказуемыми климатическими или другими явлениями. Изменение климата приводит к уменьшению объемов валовой продукции растениеводства. Для снижения рисков аграрного сектора важна борьба с градом, то есть необходимо расширение охраняемых территорий, включающих в себя новые противогородовые меры защиты. К числу сельскохозяйственных рисков относятся также заморозки и засухи.

Сотрудничество государства и частного сектора имеет важное значение для смягчения сельскохозяйственных рисков.

Одним из приоритетных решений по снижению рисков является внедрение системы агрострахования.

В настоящее время в РА действуют меры по снижению рисков, но они недостаточны, в результате чего сельскохозяйственный сектор несет большие потери, что негативно влияет на устойчивое развитие сектора. Важность этих вопросов определяет **актуальность** выбора исследования.

Основная цель статьи – выявить проблемы сельскохозяйственных рисков и предложить пути борьбы с ними.

Исследования сектора проводились с использованием описательных, аналитических, статистических данных. В результате были представлены практические рекомендации, такие как сотрудничество государства и частного сектора, а также внедрение системы агрострахования.

В статье мы рассмотрели виды сельскохозяйственных рисков, их последствия и дали рекомендации по их снижению.

Научная новизна. В статье изучены, разработаны и обоснованы подходы, применение которых поможет справиться с сельскохозяйственными рисками.

Они следующие:

- реализовывать благоприятную государственную политику и стратегию,
- выгодные условия по объемам кредитования, условиям и процентным ставкам,
- расширение сферы страхования,
- решение проблем, связанных с закупками и экспортом,
- обеспечение доступности информации и консультаций,
- государственная поддержка при внедрении зарубежного опыта в борьбе с заморозками,
- расширение площадей снабженных капельным орошением и защищенных противогородовыми сетками.

Ключевые слова: Сельскохозяйственные риски, град, заморозки, засуха, агрострахование, урожайность, снижение рисков.

THE MOST DAMAGING RISKS OF THE CROP SECTOR AND WAYS OF THEIR MITIGATION IN RA

Gayane Varuzhan Avagyan
Liana Samvel Azatyan

Abstract: Agriculture, being one of the most important sectors of the Armenian economy, is subject to risks related to various, unpredictable climatic and natural occurrences. Climate change leads to a decrease in the amount of gross crop production. To mitigate the risks of the agricultural sector, hail protection is important, that is, it is necessary to expand the protected areas, including new anti-hail protection measures. Frost and drought are among the most common agricultural risks too.

State-private sector cooperation is important in mitigating agricultural risks. One of the priority solutions for risk mitigation is the introduction of the agricultural insurance system.

Risk mitigation measures are currently in place in RA, but they are not sufficient, which results in losses and damages in the agricultural sector, thus negatively affecting the sustainable development of the sector.

The importance of these issues determines the relevance of the research topic.

The main purpose of **the article** is to identify the problems related to agricultural risks and to propose mitigation directions.

Scientific novelty.

In the article, approaches were studied, developed, and substantiated, aimed at the mitigation of agricultural risks. Those approaches are:

- implement a favorable state policy and strategy,
- favorable terms of lending volumes, terms and interest rates,
- expansion of the insurance domain,
- solving problems related to procurement and export,
- providing access to agriculture extension,
- state support in the implementation of foreign experience in the anti-frost measures,
- expansion of areas protected by drip irrigation and anti-hail nets.

Keywords: Agricultural risks, hail, frost, drought, agricultural insurance, yields, risk mitigation.